

# ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ (1914 - 1918)

1914ին պայթեցաւ Ա. Աշխարհամարտը, որ անկասկած ուղղակի կամ անուղղակի ձեւով մեծ վնասներ պատճառեց հայ ժողովուրդին, որ վեց բարէ ի վեր արդէն ստրուկի վիճակի մը մէջ կ'ապրէր՝ օսմանեան լուծին տակ:

Հայութիւնը, իր երկու հատուածներով՝ արեւմտահայ (թրքահայ) եւ արեւելահայ (ռուսահայ), Ա. Աշխարհամարտի իւրաքանչիւր օրը ապրեցաւ կամ ջարդի սպառնալիքին տակ եւ կամ ալ ջարդուող եղբոր օգնութեան հասնելու ճգնաժամը:

Այլ բախումներու կողքին, Ա. Աշխարհամարտը իրարու դէմ հանեց նաեւ կայսերական Ռուսիան եւ հայ ժողովուրդը բնաջնջելու ծրագիրներ մշակող իթթիհատական Թուրքիան: Պատերազմները, անկասկած, տեղի պիտի ունենային պատմական Հայաստանի հողերուն վրայ, որոնց ազգաբնակչութիւնը կամ ջարդուեցաւ եւ կամ ալ տեղահան եղաւ: Զարդերու տեսակէտէն՝ շատ աւելի նուազ վնասներով դուրս եկան արեւմտեան Հայաստանի արեւելեան այն շրջանները, ուր հայութիւնը կը վայելէր հայ մարտիկներու առաջնորդութեամբ ուսուցանակներու ներկայութիւնը եւ պաշտպանութիւնը: Իրաւացի է այդ ժամանակաշրջանին, ճակատներուն վրայ գործօն դեր ունեցած կովկասեան ռազմաճակատի ընդհանուր սպայակոյտի ենթապետ գործադրիչ Ղորղանեանի ա'յն վկայութիւնը, թէ՛ «Համաշխարհային պատերազմը ապացուցեց, թէ որքան ալ յառաջդիմէ մարդկութիւնը, որքան ալ գետին գրաւեմ մարդասիրական գաղափարները, նորէն գեմբի ուժով է, որ ամէն ժողովուրդ կը պաշտպանէ իր ինքնուրոյն գոյութեան իրաւունքը»:

Մերթ բնազդօրէն եւ մերթ գիտակցական որոշումներով, հայ ժողովուրդը գործադրեց կեանքի իրականութենէն զօր.

Ղորղանեանի արտագրած խորհուրդը, եւ շնորհիւ այդ խիզախ քայլին՝ հարիւր հազարաւոր հայեր փրկուեցան թրքական եաթաղանէն ու դարձան հիմնական գործօններէն մէկը քանի մը տարի ետք հիմնուելիք Ազատ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութեան:

1914ի Սեպտեմբերին, կովկասեան ռուս բանակին հրամանատարութեան թոյլտուութեամբ ու հովանաւորութեամբ կազմուեցան հայկական 4 կամաւորական խումբեր՝ Անդրանիկի, Դրոյի, Համազասպի եւ Քեօիի հրամանատարութեամբ: Հարկ է, սակայն, այստեղ պահ մը կանգ առնել այն պայմաններուն վրայ, որոնց լոյսին տակ կազմուեցան կամաւորական խումբերը:

Արդարեւ, 1908ի թրքական սահմանադրութիւնը բերած էր միայն ժամանակաւոր եւ մակերեսային լուծումներ՝ հայ ժողովուրդին, որ դարեւորէ ի վեր հիւժած էր բիրտ ու բարբարոս ճնշումներու տակ: Հայ ժողովուրդի յիշողութեան մէջ տակաւին թարմ էին 1895-96ի ջարդերը, Սասունի ապստամբական փորձերն ու Ատանայի սարսափազդու ջարդը: 1912ին, թուրք-պալքանեան պատերազմի սկզբնաւորութեան միջոցին, հայ ժողովուրդը, իր կղերական, կուսակցական եւ հանրային խաւերով յանգած էր ա'յն համոզումին, թէ առանց արտաքին միջամտութեան՝ կարելի չէ փոփոխութեան ենթարկել հայ ժողովուրդի իրավիճակը: Այս նոյն տրամադրութեան արդիւնքն էր, որ Եւրոպայի մէջ ծնունդ կ'առնէր Պօղոս Նուպարի պատուիրակութիւնը:

Սակայն յստակ փոփոխութիւն կը տեսնենք երկու տարի ետք, 1914 Յուլիսին, երբ կը գումարուի Հ. Յ. Դաշնակցութեան ճրդ Ընդհանուր ժողովը, էրզրումի մէջ:

Ընդհանուր ժողովը իր աշփին առջեւ ունէր տակաւին



Հայ կամաւորական խումբի ղեկավարները

քանի մը ամիս առաջ (Յունւար 26) Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ ստորագրուած եւ հայկական վեց վիլայէթներուն վերաբերող բարենորոգումներու ծրագիրը, որուն գծով կ'որդեգրէր հետեւեալ բանաձեւը.

«Ընդհանուր ժողովը, լսելով բարենորոգումներու մասին տրուած զեկուցումը եւ վիճարանութեան ենթարկելով, առհասարակ, կուսակցութեան բարենորոգչական գործունէութիւնը, դիւանագիտական եւ քաղաքական ցանապարհով, ընդունեց, որ կուսակցութիւնը սկզբունքով կարող է որդեգրել բարենորոգչական այդ գործունէութիւնը, իրրեւն պատակայարմար, սակայն, պարտք կը դնէ ձեռնհաս մարմիններու վրայ աւելի քիչ տարուի դիւանագիտական ուղղութեամբ՝ միշտ շարունակելով գերակշռութիւնը տալ կազմակերպական իրական ուժի զարգացման»:

Ժողովը իր ամբողջութեանը մէջ անբաւարար կը նկատէ եւ օգտակար չի գտներ բարենորոգումներու ծրագիրը ու կ'աւելցնէ, թէ «չբացասելով համդերձ, որ յիշեալ բարենորոգութեանց ծրագիրը կը պարունակէ կարգ մը կետեր՝ հա-

մապատասխան մեր նուազագոյն պահանջներուն, եւ որ, իրօք, կառավարութիւնը կը ջանայ իր բոլոր հնարաւոր միջոցներով ջլատել նոյնիսկ այդ համեստ ծրագրին իրագործումը, ինչպէս նախապէս առաջադրուած բարենորոգչական սկզբունքները, Ընդհանուր ժողովը կը հրահանգէ, որ կուսակցութիւնը, անհրաժեշտութեան պարագային, ընդդիմանայ կառավարութեան կողմէ նոյն ծրագրին իրագործման դէմ հանուած խափանարար միջոցներուն եւ պաշտպանէ հայ ժողովուրդին իրաւունքները»:

Եւ իրօք, այս տրամաբանութենէն մեկնելով է, որ կամաւորական շարժումին նախաձեռնողն ու ընդհանուր ղեկավարը եղաւ Հ. Յ. Դ. Բիւրոն, իսկ Հ. Յ. Դաշնակցութեան կովկասեան Ռայոնական ժողովը 1914 Սեպտեմբերին իւրացուց եւ գործօն դեր խաղաց կամաւորական շարժումին յաջողութեան մէջ:

## ՀԱՅ ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Հիմնուելով պատմութեան այն դասին վրայ, թէ հայկական նահանգներուն համար

ծրագրուած բարենորոգումները մեռած տառ էին, պարզ կը դառնար, որ պատերազմի ընթացքին թուրքիոյ եւ իր զաշնակից Գերմանիոյ յաղթանակը պիտի նշանակէր թրքահայերու ոչնչացումը:

Այս իսկ պատճառով, ուսասանայերը, որոնք 1886 թուականէն ի վեր ենթակայ էին պարտադիր զինուորական ծառայութիւն ընելու ուսական բանակին մէջ, չսահմանափակուելով ուսական բանակին միայն զինուոր տալով, խնդրամատոյց եղան, որ իրենց թոյլ տրուի կովկասեան ճակատին վրայ կազմելու կամաւորական խումբեր:

Այս պահանջը վերապահ ուշադրութեան արժանացաւ կովկասեան ռազմաճակատի ուսական գլխաւոր հրամանատարութեան ներկայացուցիչներուն կողմէ: Փափաքելի էր պատերազմի յաջողութեան համար օգտագործել տարր մը, որ թշնամիին հանդէպ լեցուն էր ատելութեամբ, ծանօթ էր երկրի պայմաններուն, գիտէր տեղական լեզուները եւ կապեր ունէր բնակչութեան հետ, իսկ միւս կողմէ՝ վտանգաւոր էր ազգային գունակորուստով զինուորական խումբերու կազմութիւնը, որովհետեւ ըստ ուսական հրամանատարութեան՝ նման քայլ մը կըրնար զարգացնել «անջատողական ձգտումները»:

Երկար ճիգերէ եւ բանակցութիւններէ ետք, 1914 Սեպտեմբերին, Հայ Ազգային Նորհուրդը վերջապէս ձեռք կը ձգէ չորս կամաւորական խումբերու կազմութեան ձեռնարկելու արտօնութիւն: Նուաբերու կազմութեան աշխատանքը կ'աւարտի Հոկտեմբերի երկրորդ կիսուն, այսինքն՝ թուրքերու պատերազմի սկզբնաւորութեան պահուն:

Կամաւորական չորս խումբերուն մէջ Հայ մարտիկներու թիւն էր 2482, 600 հոգի ալ կը կազմէին պահեստը: Նուաբերուն թիւի կարգով հրամանատարներ կարգուեցան կոնստանտնուպէսի փոքր զինուորական շահած ու լայն ժողովրդականութիւն վայելող հերոսներ Անդրանիկը, Դրոն, Համազասպն ու Քեռի: Նուաբերը չկապուեցան ուղղակիօրէն բարձր հրամանատարութեան, այլ կցուեցան տարբեր զօրամասերու եւ ղեկավարներու, այն նկատմամբ, որ անոնք օգտակար կ'ըլլան հետախուզական գործողութիւններու համար:

Կամաւորական գունդերու կազմութեան հիմնական նը-

պատակներէն էին մէկ կողմէ թուրքիոյ դէմ պատերազմին մասնակցելով՝ արագացնել թրքահայերու ազատագրումը, իսկ միւս կողմէ, զինուած ուժեր ունենալով ռազմաճակատին վրայ՝ նպաստել Հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան գործին:

Ըստ Սիմոն Վրացեանի, կամաւորական խումբերը կատարեցին գլխաւորաբար զինուորական դեր եւ այս տեսակէտէն անգնահատելի ծառայութիւն մատուցեցին ուս բանակին, որովհետեւ անոնք ոչ միայն յառաջապահ-հետախուզական գործողութիւններ կատարեցին, այլեւ՝ ճակատամարտներուն մասնակցեցան եւ կոտորեցան առաջին դիրքերուն վրայ:

ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ

ԻՐԱՎԻՃԱԿԸ

Նուաբերու գործունէութեան ու գործելաձեւին անցնելէ առաջ, պէտք է համառօտակները մը նետել պատերազմի սկիզբին կովկասեան ռազմաճակատի ընդհանուր կացութեան վրայ:

Արդարեւ, ռազմաճակատի երկայնքին, ուս զօրքերը ընդհանուր առմամբ կեղրոնացուած էին հիմնական եօթը շրջաններու մէջ:

- 1) Պաթումի շրջան. — 4 վաշտ:
- 2) Օլթիի շրջան. — 8 վաշտ, 24 թնդանօթ, 12 հարիւրեակ կողակ: (Ասոնք պիտի պաշտպանէին Օլթի-Իդ-Կարին գիծը):
- 3) Սարղամիշի շրջան. — 24 վաշտ, 32 թնդանօթ, 24 հարիւրեակ կողակ (Սարղամիշ-Բասէն գիծը):
- 4) Կաղուամի շրջան. — 6 վաշտ, 6 հարիւրեակ կողակ (Սարղամիշ-Երեւան գիծը):
- 5) Երեւանի շրջան. — 14 վաշտ, 32 թնդանօթ, 24 հարիւրեակ կողակ (Ալաշկերտի հովիտ-Երեւան-Դիլիջան-Թիֆլիս գիծը):
- 6) Մակուի շրջան. — 1 վաշտ, 12 հարիւրեակ կողակ, 4 թնդանօթ (Մակու-Պայազիտ-Վան գիծը):
- 7) Ատրպատականի շրջան. — 7 վաշտ, 24 թնդանօթ, 24 հարիւրեակ կողակ:

Հայ կամաւորական խումբերէն իւրաքանչիւրը կը կցուի վերոյիշեալ շրջաններուն մէջ հաստատուած ղեկավարներէն մէկուն:

Կամաւորական Ա. խումբը՝ Անդրանիկի հրամանատարու-

թեամբ, կը կցուի Ատրպատականի ղեկավարին եւ կը մասնակցի Կոթուրի, Ասուրլիի եւ Սարայի գրաւման. յետոյ վերստին կը նահանջէ Կոթուր: Ատեն մը ետք (15 Յունուար 1915) խումբը կը վերադառնայ Ջուղա, պաշտպանելով Դիլիջանի շրջանէն գաղթող հայերը: Յունուար 24ին խումբը կ'ուղղուի Սաֆրան:

Մինչեւ 1915ի գարնան ըսկիզբը խումբը հանգիստ կ'ընէ Մարանդի մէջ, սակայն Մարտ 4ին, զօր-նազարբէգեանի ղեկավարին հետ կը մասնակցի Դուզ-Ղաղ լեռան մօտ կատարած կռիւին: Մինչեւ Ապրիլի վերջը խումբը կը մնայ Նոյի մէջ եւ Ապրիլ 30ին արագօրէն Դիլիջան հասնելով՝ կը մասնակցի Մայիս 1ի ճակատամարտին: Այս կռիւին է, որ հակառակ թուրքերու պարտութեան, խումբը կը կորսնցնէ 3 գումարտակապետ եւ 76 մարտիկ: Կռիւէն ետք խումբը կը մնայ Դիլիջան, մինչեւ Մայիս 15, որմէ ետք Նանասորի անցքով կը շարժի դէպի Բաշկալէ եւ զայն կոնտրոլ գրաւելէ ետք, Մայիս 18ին, կը մտնէ Վանի ղեկավարի կազմին մէջ:

Կամաւորական Բ. խումբը, Դրոյի հրամանատարութեամբ, կը կցուի Մակուի շրջանին մէջ գտնուող ղեկավարին եւ կը հաստատուի Պայազիտ: 1914 Նոյեմբեր 7ին, ուսական ղեկավարին հետ, խումբը ճամբայ կ'ելլէ դէպի Վան եւ Դեկտեմբեր 11-12ին, Քափառի գիծին մօտ երկօրեայ դժուար կռիւ մը կը մղէ, որուն ընթացքին Դրոն ծանրօրէն կը վիրաւորուի: Ասկէ ետք, խումբը կը փոխադրուի Երեւանի շրջանի ղեկավար (Ալաշկերտի հովիտ): Հոս խումբը մինչեւ 1915ի ըսկիզբը կը մասնակցի 7 կռիւներու եւ կը պաշտպանէ հովիտի հայերը՝ դէպի ուսական սահման իրենց գաղթի պահուն:

Գ. խումբը, Համազասպի (Սրուանձտեան) հրամանատարութեամբ կը մտնէ Կաղուամի շրջանին մէջ հաստատուած ուսական ղեկավարին մէջ եւ 1914ին Նոյեմբերին կ'անցնի դէպի Դիլի-բարա, որուն գրաւումին մասնակցելէ ետք կը գտնուի եւ կը դառնայ առանձին ղեկավար, պաշտօն ըստանալով Կարադեբերեանի կիրճը ապահովելու աշխատանքը, պահպանելու համար կապը Ալաշկերտի հովիտին հետ: Նոյեմբեր 19ին խումբը ընդհարում կ'ունենայ Ալազեօզ գիւղին մօտ եւ ետ մղելով քրտական հրոսախումբերը,

կոնտրոլ կը գրաւէ Փիրսախան գիւղը, Քափառնաքը եւ Նոսրովերանը: Նոյեմբեր 24ին խումբը ետ կը քաշուի դէպի Ալազեօզ գիւղը, ուր կը մնայ մինչեւ 31 Դեկտեմբեր: Այս միջոցին է, որ Դեկտեմբեր 22էն Յունուար 18, խումբը կը մասնակցի Սարղամիշի ճակատամարտին, որ կը վերջանայ թրքական բանակին խորտակումով եւ անոր Յրդ զօրաբաժնին գերումով:

Կամաւորական Դ. խումբը, Քեռիի հրամանատարութեամբ, 19 Նոյեմբեր 1914ին կը կցուի երկրորդ թուրքեստանեան զօրամարմնին, որ բերուած էր Կարաուրգանի մօտ՝ զօրացնելու համար Սարղամիշի ղեկավարին աջ թեւը: Այսինքն՝ խումբը կը կցուի Սարղամիշի շրջանին մէջ հաստատուած ուսական ղեկավարին: Կարաուրգանէն խումբը կ'ուղղուի դէպի Աովերան, ապա՝ Իդ: Նոյեմբեր 29ին խումբը կը գրաւէ Լեւուոր գիւղը (Իդէն 10 քլմ. հարաւ) եւ կը պահպանէ կապը՝ երկրորդ թուրքեստանեան ղեկավարին եւ Իդը գրաւած զօրիստոմիին ղեկավարին միջեւ:

Դեկտեմբեր 22ին, թրքական բանակը յարձակումի կ'անցնի Սարղամիշի եւ Օլթիի ղեկավարներուն դէմ, ջանալով հասնիլ Կարս-Սարղամիշ գիծը: Այս պահուն, Դ. խումբը, թուրքերու յարձակման լոյսին տակ հրահանգ կը ստանայ քաշուիլ դէպի Իդ: Բայց նկատի ունենալով, որ Իդը արդէն լքուած էր ուսերուն կողմէ, խումբը կը ստիպուի թշնամին ճեղքելով ու մեծ կորուստներով անցնիլ դէպի Նարիման եւ երկու մասի բաժնուելով՝ կը հասնի Սարղամիշ եւ Մերդենեկ:

1915ի Յունուարին, երբ կովկասեան ճակատին վրայ առժամապէս անդորրութիւն կը տիրէ, կամաւորական խումբերուն հանգիստ տալու համար, Բ., Գ., եւ Դ. խումբերը կը տարուին Երեւան ու Կարս, իսկ Ա. խումբը՝ Մարանդ քաղաքը (Ատրպատական):

Սկզբնական այս քանի մը ամսուան կռիւներուն, 2482 կամաւորներէն կը նահատակուին 156 հոգի եւ կը վիրաւորուին 743 ուրիշներ: Արդարեւ, 899 հոգիի (սպաննուած եւ վիրաւոր) կորուստը (կամաւորներու թիւին 36 տոկոսը) պերճաբար փայտութիւն մըն է անոնց մարտական ոգիին, խիզախութեան եւ կատարած ռազմական աշխատանքին մասին:

Այս աշխատանքը գնահատելով, կովկասեան ճակատի ուսու հրամանատարութիւնը թոյլ կու տայ ձեռնարկելու կամաւորական երկու նոր խումբերու կազմութեան՝

Ե. խումբ — Վարդանի հրամանատարութեամբ,

Զ. խումբ — Տեղակալ Աւարեանի հրամանատարութեամբ:

Ռուս հրամանատարութիւնը վեց խումբերէն իւրաքանչիւրին թիւը կը բարձրացնէ հազարի: Այսպէսով, Հայ կամաւորներու ընդհանուր թիւը կը դառնայ վեց հազար:

Հանգիստէն ետք, գարնան սկիզբը խումբերը նորէն ռազմաճակատ կ'ուղարկուին: Անոնցմէ չորսը՝ Բ., Գ., Դ. եւ Ե. խումբերը, իրարու միացուելով կը մտնեն Վանի ուսական ջոկատի կազմին մէջ: Այս միացումը կատարուած էր որոշ նպատակով: Այդ ատեն, Վանի Հայ ազգաբնակչութիւնը, որ թուրքերով չընկալուած էր, ապստամբութեան ելած էր ու գուրսէն օգնութիւն կը սպասէր: Վան արշաւելու համար էր ուրեմն, որ կը կազմուէր այդ ջոկատը:

Ա. խումբը կը շարունակէ մնալ Ատրպատականի ջոկատին մէջ, իսկ Զ. խումբը կը կցուի Սարըղամիշի մէջ հաստատուած Զօր. Բարաթովի ջոկատին:

Ուրեմն, 1915ի գարնան, կամաւորական խումբերէն կը կազմուի Վանի ջոկատը, որուն կը տրուի «Արարատեան ջոկատ» անունը:

Վարդանի հրամանատարութեամբ՝ «Արարատեան ջոկատ»-ին մէջ կը մտնեն Բ., Գ. եւ Դ. խումբերը, իսկ Ե. խումբը լուծուելով՝ անոր մարտիկները կ'օգտագործուին վերոյիշեալ երեք խումբերու կազմը լրացնելու համար:

«ԱՐԱՐԱՏԵԱՆ ԶՈՒԿԱՏ»

«Արարատեան ջոկատ»ը Ապրիլ 28ին (1915) Երեւանէն ճամբայ կ'ելլէ եւ Մայիս 4ին կ'անցնի Զընդըլէն ու նոյն օրը կը մօտենայ Գըզըլ-Դիզալին: Մայիս 6ին ջոկատը կը մտնէ Զօր. Նիքոլայեւի զօրքերու կազմին մէջ՝ իրրեւ յառաջապահ, կոխով կը շարժի առաջ եւ Մայիս 11ին կը գրաւէ Բերկըրին: Մայիս 14ին ջոկատը նորէն յարձակողականի կ'անցնի, յաջորդ օրը կը գրաւէ Զանիկ գիւղը եւ Մայիս

18ին կը մտնէ Ալիւր գիւղը, ուր եւ կը դիմաւորուի երկար պաշարումէ ետք ազատուած Վանի բնակչութեան կողմէ:

Թրքական պարտուած զօրքերը կը նահանջեն Ոստանի ուղղութեամբ:

Այս թուականէն սկսեալ, «Արարատեան ջոկատ»ը բաղկացնող խումբերը կը մնան ռազմաճակատի այս գիծին վրայ եւ մերթ անջատաբար ու մերթ միասնաբար կոխներ կը մղեն չըջանին մէջ գտնուող քիւրտ հրոսախումբերուն ու ճակատին միւս կողմը հաստատուած եւ միշտ յառաջանալու փորձեր կատարող թըրքական զօրքերուն դէմ:

Վանը գրաւելէ ետք, զայն ապահով պահելու համար, պէտք էր լիծին հարաւային ափը մաքրել թուրքերէ եւ քիւրտերէ: Ասոր համար, կամաւորական Բ. խումբը Մայիս 21ին պաշտօն կը ստանայ գրաւել Շատախը եւ յետոյ՝ Մոկուր: Մայիս 25ին խումբը կը գրաւէ Շատախը եւ զայն պաշտպանելու համար հոն փոքր ուժ մը ձգելէ ետք, կը շարժի Մոկուր ուղղութեամբ եւ զայն կը գրաւէ Մայիս 31ին: Յունիս 4էն 7 խումբը կը յաջողի նաեւ ետ մղել Մոկուր վրայ թուրքերու հակաշարձակողականները:

Միւս կողմէ, կամաւորական Դ. խումբը Մայիս 22ին հրաման կը ստանայ իր կարգին գրաւելու Ոստանը: Կոխը կը սկսի Մայիս 24ին, սակայն զինուորական գործողութիւնները արագացնելու նպատակով, Յունիս 1ին Վանէն Ոստան կ'ուղարկուի կամաւորական Գ. խումբը՝ օժանդակելու համար Դ. խումբին:

Երկու խումբերը, Ոստանը գրաւելէ ետք, Յունիս 7ին միասնաբար կը գրաւեն Զեւանը եւ Յունիս 12ին՝ Սորբը: Յունիս 13ին թուրքերը հակաշարձակումի կ'անցնին, որուն պատճառով խումբերը կը նահանջեն նախ Զեւան, ապա՝ Նորքս-Մոկու գիծը:

Մինչ «Արարատեան ջոկատ»ը գործողութիւններ կ'ընէր Վանի չըջանին մէջ, միւս կողմէ, կամաւորական Ա. խումբը, որ մինչեւ 1915ի գարնան սկիզբը հանգիստ կ'ընէր Մարտի մէջ, Մարտ 2ին արագօրէն կը կանչուի Ոոյ եւ Մարտ 4ին, Զօր. Նազարբէգեանի ջոկատին հետ կը մասնակցի Դուզ-դաղ լեռան մօտ տեղի ունեցած կոխին:

Համեմատաբար աւելի անդորր վիճակէն օգտուելով,

մինչեւ Ապրիլ 28 խումբը կը մնայ Ոոյի մէջ եւ չի մասնակցիր ռազմական որեւէ գործողութեան: Ապրիլ 28ին խումբը արագօրէն կը կանչուի Դիւման, ուր կը հասնի Ապրիլ 30ին եւ անմիջական մասնակցութիւն կը բերէ Դիւմանի համարաւարտ ճակատամարտին, որուն ընթացքին Անդրանիկ եւ իր կամաւորները Հայ զինուորին վարկը այնքան կը բարձրացնեն, որ յստակօրէն եւ առանց վերապահութեան իրենց մասին կը վկայեն օրուան ուսու հրամանատարութեան անձնակազմի անդամները:

Դիւմանի ճակատամարտը կը սկսի, երբ չըջանի թրքական զօրքերու հրամանատար Ուլի փաշա կը սկսի յարձակումը եւ կը հանդիպի Անդրանիկի յառաջապահ միւտրին: Ուլի փաշա վերջնագիր կը ղրկէ Անդրանիկին եւ կը պահանջէ, որ ճամբայ տրուի թրքական զօրքերուն: Անդրանիկ իր խումբով կը մերժէ վերջնագիրը եւ երեք օր անընդհատ ետ կը մղէ թուրքերու կատաղի յարձակումները, մինչեւ որ ուսու հրամանատարութեան կողմէ Ա. խումբին օժանդակութեան կը ղրկուին նոր ուժեր՝ Զօր. Նազարբէգեանի հրամանատարութեամբ: Այս ճակատամարտին, հակառակ անոր, որ թրքական զօրքերը կը պարտուին ու կը նահանջեն, խումբը մեծ թիւով զոհեր կու տայ եւ կը կորսնցնէ 3 զուամարտակապետ եւ 76 մարտիկ:

Հայ զինուորի արիութեան ու խիզախութեան ցուցադրումէն անկախ, Դիւմանի յաղթանակը օրուան ուսու զօրավարներուն վկայութեամբ յատկանշական է, որովհետեւ «այդ ճակատամարտով կ'որոշուէր ամբողջ կովկասի բախտը»:

Դիւմանի ճակատամարտէն ետք, խումբը կը մնայ Դիւման՝ մինչեւ Մայիս 15, որմէ ետք, Ուսուսորի անցքով կը շարժի դէպի Բաշկալէ եւ զայն կոխով կը գրաւէ Մայիս 18ին՝ մտնելով Վանի ջոկատի կազմին մէջ:

1915 Յունիս 16ի ուսական բարձրագոյն հրամանատարութեան որոշումով, կովկասեան ճակատէն կը սկսի ուսական զօրքերու նահանջը, որ ուսական հրամանատարութեան կողմէ կ'արդարացուէր իրրեւ մարտավարական քայլ, մինչ անդին՝ մեծ ու սարսափելի կորուստներու դուռը լայն կը բանար արեւմտահայութեան դիմաց:

Ամբողջ ճակատին վրայ տեղի ունեցող ուսական նահանջի ալիքները Ա. եւ Բ. կամաւորական խումբերը կը նետեն իգտիր, իսկ Գ. եւ Դ. խումբերը՝ Դիւման:

Նահանջի այս մթնոլորտը ժխտական իր ազդեցութիւնը ունեցաւ նաեւ կամաւորներու տրամադրութեան վրայ, որուն հետեւանքով որոշ մէկ համեմատութիւնը կամաւորներուն նոյնպէս կը հեռանայ ճակատէն:

Այս վնասարեւ հոսանքին վերջ դնելու համար, Հայոց Ազգային Բիւրոն անմիջապէս ձեռք կ'առնէ միջոցներ՝ կասեցնելու համար կամաւորներու ցրուումը:

Հոս, որոշ լրացումներ կատարելու համար, օգտակար կ'ըլլան կամաւորական Զ. եւ Է. խումբերու գոյութիւնը: Երկու խումբերն ալ 1915ի ամբողջ վերջաւորութեան կազմուած էին Երեւանի մէջ: Զ. խումբի կազմութիւնը արդէն յիշեցինք, իսկ Է. խումբին հրամանատարն էր Յովսէփ Արղութեան:

Այս միջոցին, Հայ Ազգային Բիւրոյին եւ կովկասեան ուսական կիւսակոյտին միջեւ կատարուած բանակցութիւններու արդիւնքը կ'ըլլայ այն, որ Գ. եւ Դ. խումբերը մնան Դիւմանի մէջ, անոնց թիւը կ'ամբողջացուի Զ. եւ Է. խումբերէն ընտրուած 750 նոր կամաւորներով, ինչպէս նաեւ՝ արագօրէն կը լրացնեն եւ իգտիրէն վերստին ճակատ կ'ուղարկեն Ա. եւ Բ. խումբերը:

Ումբերու վերադասարարութեան ու վերակազմութիւնը կը տեւեն 3 ամիս՝ 1915 Օգոստոսէն Հոկտեմբեր:

Նախապատրաստական աշխատանքներէն ետք, կամաւորական բոլոր խումբերը կ'ենթարկուին առաջին կովկասեան երկրապահ զօրաց կիսաբաժինին՝ Զորորդ կովկասեան զօրամարմնին կողմէ տրուած հրահանգին հիմամբ:

Մինչեւ 1915ի աւարտը, Հայ կամաւորական խումբերը յառաջապահ դիրքերու վրայ կը մասնակցին Վանի չըջանի վերադասարար ու նախկին ճակատի գիծի վերահաստատումին: 1916ի սկիզբը կը յատկանշուի զինուորական բազմաթիւ գործողութիւններով ու յաջորդաբար Կարինի, Բաղէշի ու Տրապիզոնի անկումէն ետք՝ կամաւորական խումբերը մասնակից կը դառնան Կարինի, Մշոյ դաշտի եւ Բաղէշի վերա-

գրաման աշխատանքին: Բազմազան գրաման ընթացքին հերոսական գործողություններով հանդէս կու գայ կամաւորական Գ. խումբը, որ սակայն կու տայ շատ գոհեր. անոր հրամանատարական կազմին մեծ մասը կա՛մ գոհուեցաւ եւ կամ ալ վիրաւորուեցաւ:

**ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԽՈՒՄ-ԲԵՐՈՒ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ**

1915ի աւարտին, խստորէն կը զգացուի կամաւորական խումբերու վերակազմութեան անհրաժեշտութիւնը, այն իմաստով, որ խումբերը վերածուին կանոնաւոր զօրամասերու, իրենց շարքերուն մէջ առնելով պարտադիր զինուորական ծառայութեան ենթակայ տարրեր ու պատերազմական գործին վարժ հրամանատարներ, կանոնաւորելէ ետք այդ զօրամասերու պարենա-

ւորման ու մատակարարման գործը:


Այս իմաստով, Հայոց Ազգային Բիւրոյին կողմէ կովկասեան բանակի գլխաւոր հրամանատարութեան ներկայացուած աղբրսագիրը կ'ընդունուի եւ 1916ի Մարտին, բարձրագոյն հրամանատարութեան կողմէ կը վաւերացուի հայկական խումբերը վեց հայկական վաշտերու վերածելու ծրագիրը, նոյն կազմով, որ ունէին հետեւակ կողակներու վաշտերը, այսինքն՝ իւրաքանչիւր վաշտի մէջ չորս գումարտակի դրութեամբ:

Հայկական վաշտերու թուական կազմը սովորականի հասցընելու համար, ամբողջ կովկասեան ճակատէն եւ պահեստի վաշտերէն կ'ուղարկուին այն բոլոր հայ սպաներն ու զինուորները, որոնք կը փափաքէին ծառայել հայկական զօրաբաժիններու մէջ:

Թէեւ ուս բարձր հրամանատարութիւնը համոզուած էր, որ հայկական խումբերը կարելի էր անհրաժեշտ են եւ թոյլ տուած էր յիշեալ վաշտերու կազմութիւնը, բայց երբ հարց եւ պահանջ կը դրուի միացնելու հայկական վաշտերը կիսաբաժինի մը մէջ, խրստորէն կը մերժէ: Այս մերժումին տուն տուողը այն տեսակէտն էր, թէ ազգային զինուորական մեծ միութիւնները վտանգաւոր են պետութեան համար: Այսպէսով, հայկական վաշտերը եւս, ինչպէս ի-

րենցմէ առաջ կազմուած խումբերը, դատապարտուած էին ցրուելու կովկասեան ռազմաճակատի ամբողջ տարածութեան վրայ, անցնելով ջոկատէ ջոկատ ու շարունակ ենթարկուելով նոր հրամանատարներու:

1916 տարեշրջանին, հայկական վաշտերը բաժնուեցան գլխաւորաբար երկու խմբաւորումներու: Մէկ բաժինը գործողութիւններու մասնակցեցաւ թրքական ճակատին վրայ, իսկ միւս բաժինը՝



**/// ara /// TRAVEL** 

- Օդանաւային միջազգային ճամբորդութեան տոմսեր:
- Դէպի Կիպրոս նաւային տոմսեր:
- «Վիզա»յի գործողութիւններ:
- «ԹԵԼԵԲՍ»Ի ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ:

ARA TRAVEL, ՊՈՒՐՃ ԼԱՄՈՒՏ, ԼԱՍՍԱԿԱՏԱՆ ՇԷՆՔ, ԼԵՌ. 266594, 261296: ԹԵԼԵԲՍ՝ ARATRA LE 44082:

# CONFECTION

# SHOW TIME

 SPORTS WEAR ETS. 

ARAX STREET, TEL. 495544

պարսկական ռազմաբեմին վրայ:

**ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՎԱՂՈՐԴԱՅՆԻՆ ՀԱՅ-ԿԱԿԱՆ ՎԱՇՏԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՍԱՆՈՒՄ**

1917ի Փետրուարեան յեղափոխութիւնը եկաւ շրջելու կովկասեան ռազմաճակատի իրավիճակը եւ արդիւնքը եղաւ այն, որ բոլշեւիկեան քարոզչութեամբ ճակատի զօրքերը հրաժարեցան իրենց տրուած հրահանգները կատարելէ:

Այս հանգրուանին է, որ հայկական իշխանութիւններուն կը պարզուէին շատ սուր մտահոգութիւններ: Կովկասեան ճակատին վրայ ռուսերու տարած յաղթանակներուն իբր արդիւնք՝ գրաւուած էր թրքահայաստանի մէկ մասը: Իսկ ռուսական բանակներուն կողմէ ճակատին լքումը կը վճռէր ո՛չ միայն թրքահայաստանի, այլեւ՝ ամբողջ Անդրկովկասի բախտը: Անիմաստ կը դառնային բոլոր նուաճումները: Անհրաժեշտ կը դառնար լրջօրէն մտածել կովկասեան բանակին կողմէ գրաւուած հայկական շրջաններու պաշտպանութեան մասին՝ ռուսական բանակներու հաւանական հեռացումէն ետք:

Այսպէսով, ղէպքերու ընթացքէն զգալի դարձաւ հայկական նոր զօրամասերու կազմութեան եւ արդէն իսկ գոյութիւն ունեցող մասերու կազմակերպման անհրաժեշտութիւնը: Այս մտահոգութեամբ, Հայոց Ազգային Իրերոն առաւ անհրաժեշտ քայլերը, որպէսզի հայկական վաշտերը վերածուին երկվաշտ գունդերու եւ միացուին կիսաբաժնի մը մէջ, նաեւ՝ թոյլտուութիւն ապահովել նոր մասերու կազմութեան գծով:

Այս ծրագիրը եւս վաւերացուցաւ ռուսական բարձրագոյն հրամանատարութեան կողմէ եւ հիմը հանդիսացաւ ապագայ հայկական զօրամարմին: Այսուամենայնիւ, Հոս պէտք է կանգ առնել այն իրողութեան վրայ, թէ յաջորդող քանի մը

ամսուան (1917 Յուլիս-Չոկտեմբեր) ընթացքին ակնյայտ պիտի դառնար, որ կովկասեան ճակատը փրկելու համար անհրաժեշտ պիտի դառնար ռուսական զօրամասերը փոխարինել հայկական ազգային մասերով եւ հակառակ անոր, որ Սեպտեմբերին, կովկասեան հրամանատարութեան կողմէ անյարմար կը նկատուէր նոր ծրագիրը՝ յառաջիկայ ղէպքերը իրենք էին, որ անհրաժեշտ պիտի դարձնէին հայկական զօրամարմին մը կազմութիւնը:

Այս իրավիճակին մէջ աւելի անխուսափելի ընտրութիւն կարելի է սեպել հայկական զօրամարմինն ստեղծումը, որ պիտի ստանձնէր ո՛չ միայն ամբողջ ճակատի պաշտպանութիւնը, այլեւ՝ Կարսի ու Կարինի բերդերուն պէս ամրութիւններու պահպանումը:

Նշենք, որ զինուորական այս գործողութիւններուն ու տարերային իրավիճակին զուգընթաց էր, որ քաղաքական տեսակէտէն՝ հայութիւնը յաջորդաբար ականատես դարձաւ նաեւ անդրկովկասեան Կոմիսարիատի ու Սէյմի փորձառութիւններուն:

Մինչ կացութիւնը մինչեւ 1918 Յունուար-Փետրուար օրըստօրէ կը ստանար ալ աւելի գահավէժ ընթացք, յատուկ կարգադրութիւններով ձեռնարկուեցաւ նաեւ հայկական զօրամասերու կազմութեան՝ Շուլաւէրի, Շուշիի, Ախալքալաքի, Նախիջևեանի, Գանձակի, Բագուի, Ախալցխայի, Թիֆլիսի եւ Վարդաշէնի մէջ: Ասոնցմէ անկախ կազմուեցան նաեւ այլ մասեր՝ հսկելու համար Թիֆլիս-Ջուղա եւ Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղագիծերուն:

Այս զարգացումներուն հետ փոխուեցաւ նաեւ հայկական զօրամասերու աշխատելաձեւի բնոյթը: Արդարեւ, հայկական խումբերը, վաշտերն ու երկվաշտ գունդերը, 1914էն սկսեալ ու իրենց եռամեայ գործողութիւններուն ընթացքին մերթ պաշտպանողական, սակայն ընդհանուր առմամբ

յառաջխաղացքներ արձանագրելու կոչուած էին ռուսական բանակներուն հետ: Սակայն ռուսական բանակներու կովկասեան ճակատէն պարպումով, հայկական գունդերուն կարելիութիւնները առաւելագոյն պարագային պաշտպանողական բնոյթ կը ստանային:

1918 Յունուարէն սկսեալ, հայկական զօրամասերը առաւելաբար կը կեդրոնացուին ու կը պաշտպանեն Քեալ քիթը, Երզնկան, Կարինը, Ունուսը, Սարըղամիշը, Վանը, Երեւանը, Կարսը եւ Ալեքսանդրապոլը:

1918ի սկիզբը, ճակատին վրայ Մեհմէտ փաշայի հրամանատարութեամբ կը սկսի գործել թրքական Յրդ բանակը, որ Մարտին հասած էր 25 հազարի: Թրքական զօրքերը ունէին հիմնական առաւելութիւններ: Անոնք ծանօթ էին մեր ճակատի ու թիկունքի պարզած վիճակին, մեր թիկունքը կը վայելէր մահմետականներու համակրանքն ու աջակցութիւնը, անոնց կորովը բարձր էր՝ մինչ մեր զօրամասերուն մօտ թարմ էր ռուսական զօրքերու քայքայման ու հեռացման յիշատակը: Ասոնցմէ անկախ, թուրքերը ունէին մէկ հրամանատարութիւն, մինչ մեր մօտ կը տիրէր բազմիշխանութիւն եւ անիշխանութիւն:

Այս թուականին, հայկական զօրամասերու դասաւորումը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը.

**Երեւան.**— Հայկական Յրդ եւ Յրդ հրացանաձիգ գունդերը եւ Տրդ գունդի մէկ գումարտակը:

**Կարս.**— Բերդային մասեր, որոնք սակայն կը գտնուէին տակաւին կազմակերպման վիճակի մէջ:

**Ալեքսանդրապոլ.**— Հայկական Տրդ եւ Տրդ հրացանաձիգ գունդերը եւ բերդային մասեր:

**Վան.**— Հայկական Տրդ հրացանաձիգ գունդը եւ տեղ-

ւոյն բնակչութենէն կազմուած Վանի երկու գունդերը:

**Ունուս.**— Հայկական Տրդ հրացանաձիգ գունդը եւ Ունուսի ու Ղարաքիլիսէի տեղացիներէն կազմուած 2 գունդեր:

**Էրզրում.**— Էրզրումի հետեակ գունդը, հայկ. առաջին հրացանաձիգ գունդը եւ Տրդ հրացանաձիգ գունդի մէկ գումարտակը եւ բերդային մասեր:

**Երզնկա.**— Երզնկայի հետեակ գունդը՝ 3 գումարտակներով եւ կամաւորական խումբերով, Մուրատի դեկավարութեամբ:

**Քեալիքա.**— Սեպուհի կամաւորները:


**Տրապիզոն.**— Աստիճանաբար ղէպի Ռուսաստան հեռանալու ճամբուն վրայ գտնուող ռուսական զօրամասեր:

Այս թուականէն սկսեալ է, որ հայկական զօրամասերը թէեւ հերոսական կռիւներ կը մղեն թրքական բանակներուն ու անոնց ընկերացող քիւրտներուն դէմ, սակայն հայկական զօրամասերը նաեւ կը սկսին նահանջել ղէպի թիկունք, իրենց հետ տանելով քաղաքներու բնակչութիւնը՝ Հնարաւոր առիթներով, քանի մը ամիս ետք՝ Ապրիլ-Մայիսին, Ղարաքիլիսէի, Բաշ Ապարանի եւ Սարդարապատի մէջ մը ղելու համար իրենց գոյութեան վերջին ճակատամարտը, արձակելու իրենց վերջին փամփուշտները:

Իբրեւ եզրակացութիւն աւելցնենք, որ հայ ժողովուրդի բոլոր խաւերուն մասնակցութիւնը կովկասեան ռազմաճակատի գործողութիւններուն պայմանաւորուած էր Արեւմտահայաստանը ազատագրելու նպատակով: Պատերազմի ըսկիզբէն ի վեր լայն թափ ստացած հայ կամաւորական շարժումը ինքնաբոլոր պոթիկում մըն էր, եւ կը հանդիսանար ազգային ազատագրութեան համար հայ ժողովուրդի մղած պայքարին շարունակութիւնը:

Ա. Պ.

VENUS EXCHANGE  
 HAIKARAM KALINDJIAN & SONS  
 ROND POINT DORA  
 KHARRAT BLDG.  
 P. O. BOX 80341  
 BEIRUT - LEBANON  
 TEL. (01) 267 065  
 267 196 - 499 087  
 TELEX KALEX 44229 LE

ԻՏԱԼԱԿԱՆ ՆՐԱՇՈՒՄՍ ՈՍԿԵՂԵՆՆԵՐՈՒ  
 ՆՈՐԱԶԵԻ ՀԱՐՈՒՄՍ ՀԱՆՐԱՇՈՒՆ  
  
 ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ, ՍԱՆԹՐ ՊԼԱՆՔՕ, ՀԵՌ. 266367